

մի յայտնեացես¹⁹, այլ վասն Աստուծոյ փութացուք հետեւիլ ճշմարտութեան. դուք մի կարծէք թէ նոցա սեթեւեթեալ խաբեբայութիւն զձեր սիրտն միայն է հաւանեցուցեր եւ պղտորեր. այլ բազում անգամ զմեզ է դրդեր եւ զայլ կատարեալս. որ ժ տարով ընդունէր եմք միամտութեամբ, մինչեւ Աստուծոյ ողորմութեամբն յետոյ ճշմարտաբանիցն բանին կրկին հասու եղեալք կատարելագունին՝ աստուածով աղատեցաք ի չար կրօնից եւ աղանդոց նոցա: Ոյ սիրելիք, զի թէպէտ ամենայն մարդ ըստ կարողութեան իւրոյ մասն ինչ ի յառաքինութեանց բստանայ. այլ հաւատոյ դաւանութիւն եւ քննութիւն դժուարին է, որպէս ասէ սուրբն Գրիգորն Ստաթէի. ‘Ծածուկ եւ զանխուլ է աստուածաբանութիւն հասարակ մտաց. եւ հազիւ ճանաչի կիրթ խորհրդոց եւ նուրբ քննութեանց սրբոց. եւ ամենայն կատարեալ գրոց բանք կատարելոցն է գիտելի շնորհին Աստուծոյ, Այսպէս յայտնեալ է զայս նորաձեւութեանս հանգամանս ոմն պրեւտիկոս ճշմարտաբան Ղուկաս Լոռեցի յորջորջեալ. զոր որոմնացանքն²⁰ սերմանեալ են ի գիրս Ներսէսի Լամբրոնացոյն, ի Մեկնիչ աղօթիցն, որ սուտ է եւ խորթ եւ ոչ է Ներսէսի. զոր յառաջիկայդ վեց գլխով բացայայտէ վերոյասացեալ քաջ գրամատիկոսն, ուղղափառութեան վարդապետն Ղուկաս. որում եւ

¹⁹ Հմմտ. Ղեւտ. ԺԲ. 7:

²⁰ Զ. որոմանանքն: